ԱՐԱԲԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ

Հունիսի 23—27-ը Երևանում տեղի ունեցավ արաբագետների համամիութենական III կոնֆերանսը, որը հրավիրել էին ՍՍՀՄ գիտությունների ակադեմիան և ՀՍՍՀ գիտությունների ակադեմիան և Երևանի պետական համալսարանը։ Կոնֆերանսին մասնակցում էին Մոսկվայի, Լենինգրադի, Թբիլիսիի, Բաքվի, Տաշքենդի, Դուշանբեի, Ալմա-Աթայի և Երևանի արաբագիտական կենտրոնները ներկայացնող մոտ 140 արաբագետներ, ինչպես նաև երկու արաբագետ Սիրիայից և Սուդանից։ Նախորդ երկու կոնֆերանսները դումարվել են Լենինգրադում։ Այս անգամ արաբագետներն իրենց կոնֆերանսի հավաքատեղի ընտրեցին Երևանը, որը վկայում է հայ արաբագետների նվաճումների և ծառայությունների ճանաչման մասին։

Կոնֆերանսի պլենար և սեկցիոն նիստերում ընթերցվեց մոտ 110 զեկուցում, որոնցից 18-ը ներկայացրել էին Եգիպտոսի, Սիրիայի, Սուդանի և Ալժիրի գիտնականները։

Առաջին պլենար նիստում զեկուցումներով հանդես եկան ՍՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու Ն. Ա. Լեբեդևը («Արաբագիտական ուսումնասիրությունների մասին պատմության և տնտեսության բնագավառներում») և նույն ինստիտուտի գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր Գ. Շ. Շարբատովը («Արաբական լեզվի և գրականության ուսումնասիրությունների մասին»)։ Զեկուցողները նշեցին, որ նախորդ կոնֆերանսից հետո ընկած ժամանակաշրջանում սովետական արաբագետները հասել են նշանակալի նվաճումների։ Հրատարակվել են մի շարք կարևոր մենագրություններ պատմության, տընտեսության և բանասիրության տարբեր պրոբլեմների շուրջը։ Այժմ արաբագիտության կարևոր կենտրոններ են հանդիսանում ոչ միայն Մոսկվան և Լենինգրադը, այլև Վրաստանը, Ադրբեջանը, Հայաստանը, Ուզբեկստանը և Տաջիկստանը։ Զեկուցողներն ընդգծեցին հատկապես այն հանդամանքը, որ միութենական հանրապետություններում առաջացած գիտական օջախներն ունեն իրենց ուսումնասիրությունների ուրույն բնագավառը և թեմատիկայով մեկը մյուսին չեն կրկնում։

Պլենար նիստում արաբա-իսրայելական կոնֆլիկտին նվիրված զեկուցումով հանդես եկավ «Պրավդա» թերթի բաժնի վարիչ, տնտեսական գիտությունների դոկտոր Ի. Պ. Բելյաևը։

Կոնֆերանսում գործում էին չորս սեկցիաներ՝ պատմության ու տնտեսության, լեզվի ու գրականության, սեմագիտության և գիտության պատմության ու օժանդակ դիսցիպլինների։

Պատմության ու տնտեսության սեկցիայում ընթերցվեց 32 զեկուցում։ Թեմատիկ առումով նրանք բազմազան էին և ընդգրկում էին հիմնականում արաբական երկրների նոր և նորագույն շրջանի պատմության և տնտեսության կարևոր հարցերը։ Զեկուցումների զգալի մասը նվիրված էր ազգային-ազատագրական շարժումներին։ Դրանցից հատկապես պետք է առանձնացնել պրոֆ. Գ. Լ. Բոնդարևսկու (Մոսկվա) «Ազատագրական շարժումը Եմենում և անգլիական գաղութային քաղաքականությունը XIX դ. վերջում», պատմ. գիտ. թեկնածու Ա. Մ. Մենթեշաշվիլու (Թբիլիսի) «Ազգային-ազատագրական շարժումը Իրաքում 1900—1914 թթ.», պատմ. գիտ. թեկնածու Զ. Ռուինդեժի (Բաքու) «Իրաքի կոմպարտիայի դիրքը իրաքյան հեղափոխության առաջին և երկրորդ էտապներում», պատմ. գիտ. թեկնածու Շ. Խ. Մհոյանի (Երևան) «Արաբական հասարակայնության տարբեր խավերի դիրքը քրդական պրոբլեմի նկատմամբ Իրաքում», Է. Հասանովի (Բաքու) «Իթթիհադ աշ Շաաբը» Իրաքի ազգային ուժերի միասնության համար մղված պայքարում» և այլ զեկուցումներ։

Ուշագրավ էր Ն. Ս. Լուցկայայի (Մոսկվա) «Լենինը Մարոկկոյի մասին» հաղորդումը, որտեղ ցույց տրվեց, թե ինչպես Վ. Ի. Լենինը ժամանակին մերկացրել է իմպերիալիստական պետությունների գաղութային քաղաքականությունը Մարոկկոյի նկատմամբ։

Արաբական երկրների նորագույն պատմության պարբերացման հարցի շուրջը հաղորդումներով հանդես եկան մոսկվացի գիտաշխատողներ, պատմ. գիտ. թեկնածուներ Վ. Ի. Կիսելյովը և Ռ. Ի. Վորլիկովը, որոնցից յուրաքանչյուրը առաջարկեց պարբերացման իր սխեման։

Այս սեկցիայում ընթերցվեցին մի շարք զեկուցումներ, որոնք նվիրված էին համեմատաբար քիչ ուսումնասիրված և կամ վիճելի հարցերի։ Դրանցից էին, օրինակ, պատմ. գիտ. թեկնածու Ե. Ա. Լեբեդևի (Մոսկվա) «Արաբական երկրներում «դեմոգրաֆիկ պայթյունի» մի քանի գործոնների մասին», պատմ. գիտ. դոկտոր Ն. Հ. Հովհաննիսյանի (Երևան) «Արաբական տարբեր քաղաքական ուժերի վերաբերմունքը երկրորդ համաշխարհային պատերազմի նկատմամբ», պատմ. գիտ. թեկնածու Բ. Գ. Սեյրանյանի (Մոսկվա) «Ազգային ճակատի ձևավորումը Եգիպտոսում 1946 թ.», պատմ. գիտ. թեկնածու

Ռ. Գ. Լանդայի (Մոսկվա) «Մանր բուրժուազիայի քաղաքական դերը արարական երկրներում» և պատմ. գիտ. թեկնածու Ս. Հ. Նաջարյանի (Երևան) «Հայ-արաբական մշակութային կապերի զարգացման սոցիալ-քաղաքական և տնտեսական նախադրյալների մասին» զեկուցումները։

Արաբագետ պատմաբանների զեկուցումների զգալի մասը նվիրված էր միջազգային հարաբերությունների և արաբական երկրների արտաքին քաղաքական կապերի լուսաբանմանը։ Ուշագրավ էին պրոֆ. Բ. Մ. Դանցիգի (Մոսկվա) «XIX դ. վերջի և XX դ. սկզբի ռուս-մարոկկոյական հարաբերությունների պատմությունից», Ա. Ա. Բայրամյանի (Երևան) «Ալեքսանդրետի սանջակի պրոբլեմը և Անգլիայի ու Ֆրանսիայի դիրքը (1936—1939 թթ.)», պատմ. գիտ. թեկնածու Ն. Ա. Դլինի (Մոսկվա) ամերիկա-եգիպտական հարաբերություններին և պատմ. գիտ. դոկտոր Ա. Գ. Գալստյանի (Երևան) XIV դ. հայ-արաբական հարաբերություններին նվիրված զեկուցումները։

Մի շարք հետաքրքիր զեկուցումներ էին ներկայացրել տնտեսագետները։ Դրանց մի մասը նվիրված էր անկախություն նվաճած երկրների կառավարությունների տնտեսական քաղաքականությանը։ Այդ հարցերն էին արծարծվում տնտ. գիտ. թեկնածու Վ. Կ. Արիսկինի (Մոսկվա) «ԱՄՀ-ի կառավարության ագրարային քաղաքականությունը», պատմ. գիտ. թեկնածու Լ. Ն. Կոտլովի (Մոսկվա) «Եմենի կառավարության տնտեսական միջոցառումները անկախության նվաճումից հետո», Գ. Ս. Շահբազյանի (Մոսկվա) «Պետական կապիտալիզմի զարգացումը Իրաքում» զեկուցումներում, որոնք շարագրված էին տնտեսական փաստերի վերլուծության հիման վրա։ Իրենց սեփական, անկախ նավթային արդյունաբերություն ստեղծելու համար արաբական երկրների մղած պայքարին էր նվիրված տնտ. գիտ. թեկնածու Ռ. Ն. Անդրեասյանի զեկուցումը (Մոսկվա), իսկ Հյուսիսային Աֆրիկայի երկրների տնտեսության մեջ Սահարայի նավթի դերի լուսաբանմանն էր նվիրված տնտ. գիտ. թեկնածու Ն. Ա. Արշարունու (Մոսկվա) զեկուցումը։

Տնտեսագիտական բնույթի զեկուցումներից ուշագրավ էին նաև պատմ. գիտ. թեկնածու Ռ. Խ. Թոփուզյանի (Երևան) հաղորդումը՝ նվիրված հայ առևտրա-վաշխառուական կապիտալի դերին Եգիպտոսում XIX դ. առաջին կեսին և մոսկվացի գիտնականներ, աշխ. գիտ. թեկնածուներ Վ. Ա. Պուլյարկինի և Գ. Ն. Ռտկինի միացյալ հաղորդումը արարական երկրների ուրբանիզացիայի և մեծ քաղաքների առաջացման պրոբլեմի մասին։

Գրականության և լեզվի սեկցիայում ընթերցվեց 43 զեկուցում։ Առանձին արաբ գրողների ստեղծագործության վերլուծությամբ հանդես եկան բանաս. գիտ. թեկնածու Ա. Ա. Դոլինինան (Լենինգրադ), արվեստագիտության թեկնածու Մ. Յու. Սահակյանը (Երևան), բանաս. գիտ. թեկնածու Վ. Պ. Դեմիդչիկը (Դուշանբե) և ուրիշներ, իսկ գրականագիտական-տեսական բնույթի հարցերով զեկուցումներ կարդացին բանաս. գիտ. թեկնածուներ Մ. Տ. Զեհբաբին (Բաքու), Զ. Լ. Նամիտոկովան (Մոսկվա), Վ. Մ. Դուլուզաղեն (Բաքու), Մ. Շ. Հուսեյն-Զադեն (Դուշանբե), Լ. Ա. Պետրովան, Ի. Ն. Սոլոլովան (երկուսն էլ Լենինգրադից) և ուրիշ գիտնականներ։

Արաբագետ-լեզվաբանները իրենց հիմնական ուշադրությունը դարձրին արաբերենի զարգացման օրինաչափություններին։ Արաբական բարբառներում բառակազմության մի քանի հարցերին էր նվիրված բանաս. գիտ. դոկտոր Ռ. Շ. Շարբատովի (Մոսկվա) զեկուցումը։ Մյուս զեկուցումներից հատկապես պետք է նշել պրոֆ. Ա. Ս. Լեկիաշվիլու (Թբիլիսի) «Արաբերենում հոլովների համակարգի դիախրոնիկ վերլուծությունը», պրոֆ. Ա. Զ. Մամեդովի (Բաքու) «Ադրբեջանցիների համար արաբերեն դասագրքեր պատրաստելու փորձից», բանաս. գիտ. թեկնածու Հ. Մ. Գաբուչյանի (Մոսկվա) «Շարահյուսական ժամանակը արաբերենում», Վ. Մ. Բելկինի (Մոսկվա) «Արաբերեն գրական լեզվի պատմության պարբերացման սկզբունքների մասին», Վ. Ս. Խրակովսկու (Լենինգրադ) «Հոմանիշների հարցի շուրջը» զեկուցումները։ Բանաս. գիտ. թեկնածու Բ. Լ. Զուգասզյանի հաղորդումը նվիրված էր XV դ. արաբերեն-պարսկերեն-հայերեն մի բառարանի, որը պահվում է Մատենադարանում։

Համեմատաբար փոքրաթիվ էր սեմագետների սեկցիան, որտեղ լսվեցին պրոֆ. Կ. Մերերելու (Թբիլիսի), բանաս. գիտ. թեկնածու Յա. Ռ. Գրունտֆեստի (Լենինգրադ), բանաս. գիտ. դոկտոր Վ. Գ. Ալիվլեդիանիի (Թբիլիսի) զեկուցումները։

Գիտությունների պատմություն և օժանդակ դիսցիպլինների սեկցիայի մասնակիցները քննության առան գիտությունների պատմության հետ առնչվող և համեմատաբար քիչ ուսումնասիրված մի շարք հարցեր։ Բանաս. գիտ. դոկտոր Պ. Ն. Բուլգակովի (Տաշքենդ) հաղորդումը նվիրված էր Օմար Իբն Մուհամեդ ան-Նեսեֆիի անհայտ հանրագիտարանին, իսկ Պ. Ա. Գրյազնևիչը (Լենինգրադ) զեկուցեց արարների ցեղային տոհմաբանության և արաբական ծագումնաբանության մասին։ Այս սեկցիայում ընթերցված զեկուցումներից ուշագրավ էին նաև պատմ.

գիտ. թեկնածու Ա. Ն. Տեր-Ղևոնդյանի (Երևան) «Արաբական ավանդությունը հայերի և հարևան ժողովուրդների ծագման մասին», պատմ. գիտ. թեկնածու է. Տ. Սիխարուլիձեի (Թբիլիսի) «Յակուտի «Մու՛ջամ՛ալ Բուլդանը» որպես Կովկասի պատմության աղբյուր», պատմ. գիտ. թեկնածու Ն. Վելիխանլիի (Բաքու) «Արաբական միջնադարյան աշխարհագրագետ-ճանապարհորդների Կովկասի վերաբերյալ աշխատությունները», պատմ. գիտ. թեկնածու Ե. Ա. Թարվերդովայի (Մոսկվա) «Մաղրիբի երկրների իդեոլոգիան XI—XIII դդ.» զեկուցումները:

Կոնֆերանսի եզրափակիչ պլենար նիստում «Արաբական փիլիսոփայության դերը և նշանակությունը համընդհանուր փիլիսոփայության պատմության մեջ» զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ, պրոֆ. Վ. Կ. Զալոյանը, իսկ արաբագիտական կադրերի պատրաստման հարցի մասին հաղորդումով հանդես եկան Մոսկվայի պետական համալսարանին կից արևելյան լեզուների ինստիտուտի ռեկտոր, պրոֆ. Ա. Ա. Կովալյովը և Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի դեկան, դոցենտ Գ. Մ. Նալբանդյանը:

Կոնֆերանսում «Վ. Ի. Լենինի անվան պետական գրադարանի արաբական ֆոնդը» հաղորդումով հանդես եկավ է. Յա. Օշերովիչը:

Արաբագետների համամիութենական III կոնֆերանսը կարևոր իրադարձություն էր ինչպես արաբագետների, այնպես էլ բոլոր արևելագետների համար և անկասկած կխթանի արաբագիտության հետագա զարգացմանը մեր երկրում:

Պատմ. գիտ. դոկտոր Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ